

## ՀՈՎՍԵՓ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՐՑԱԽԵՏԻ «ՎԱՀԱՆ ՈՒՂՂԱՓԱՆՈՒՄ»

*Բանալի բառեր՝ Հովսեփ Արցախեցի, Հայ Առաքելական եկեղեցի, լուսերական, ուղղափառ, պահճ, սրբերի բարեխոսություն, պատկերապաշտություն, գրաքննություն:*

18-19-րդ դարի բանասեր, աստվածաբան, փիլիսոփա և մանկավարժ, Գանձասարի վանքի միաբան Հովսեփ վարդապետ Արցախեցին «Վահան ուղղափառաց» աշխատությունը հեղինակել է 1838 թ. Շուշիում՝ Կարաբաղի թեմի առաջնորդ Բարդասար արքեպիսկոպոս Հասան-Ջալալյանի հորդորով<sup>1</sup>: «Վահան ուղղափառաց»-ը հասցեագրված էր դեռևս 1820-ականներից Արցախում հաստատված բողոքական միսիոներներին և հատկապես Հայ Առաքելական եկեղեցու այն հետևորդներին, որոնք սկսել էին համակրել և հավանաբար նաև անդամագրվել Լուսերական եկեղեցուն: Աշխատությունը բաղկացած է երեք գլխից՝ «Յաղագս Պահոց», «Յաղագս բարեխոսության սրբոց», «Յաղագս պատկերասիրության և պատկերատեսցության»: Հովսեփ վարդապետը վկայակոչում է բազմաթիվ մեջբերումներ Հին և Նոր Կտակարաններից՝ փորձելով բացատրել և հիմնավորել ուղղափառ քրիստոնեական ուսմունքը պահճի, սրբերի բարեխոսության և պատկերների երկրպագության վերաբերյալ: Նշենք, որ «ուղղափառ քրիստոնյա» արտահայտությամբ հեղինակը բնորոշում է ինչպես Հայ Առաքելական, այնպես էլ Ռուս Ուղղափառ, Հույն Ուղղափառ և Լատին եկեղեցիների հետևորդներին:

\* Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, Գեղարվեստի պետական ակադեմիա, պ. գ. p., armine.melkonyan@yahoo.com, հոդվածը ստանալու օրը՝ 2 դեկտեմբերի, 2025, հոդվածը գրախոսելու օրը՝ 10 դեկտեմբերի, 2025

<sup>1</sup> Հովսեփ վարդապետի երկերի և Մաշտոցյան Մատենադարանում պահվող ձեռագրերի ընդհանուր ֆնուկթյունը տե՛ս **A. Melkonyan**, “The Literary Heritage of the Philosopher, Theologian, and Philologist Hovsep‘ Arts‘akhets‘i (18<sup>th</sup>-19<sup>th</sup> century)”, *Das Kulturelle Erbe von Arzach*, ed. **A. Muller, G. H. Harutyunyan, D. Heller, M. Tamcke**, Kiel University, 2024, էջ 511-524: Տե՛ս նաև **Թ. Միմասյան**, *Արցախի գրչության կենտրոնները*, Երևան, 2015, էջ 23-24:

1838 թ. Բաղդասար մետրոպոլիտ Հասան-Ջալալյանը հրատարակության արտոնություն ստանալու նպատակով «Վահան ուղղափառաց»-ն ուղարկում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին: Գրաքննիչ Հովհաննես վարդապետ Շահխաթունյանցը տալիս է դրական եզրակացություն՝ կատարելով աննշան և խմբագրելի մի դիտարկում: Այդուհանդերձ, հոգևոր Սինոդի անդամները չեն արտոնում երկի տպագրությունը՝ այն հանձնելով Էջմիածնի մատենադարանապետին և դասելով «ի շարս արգելեալ մատենից»<sup>2</sup>:

Բնագիրը հրատարակում ենք մեզ հասած միակ ինքնագիր օրինակից, որը ներառված է ՄՄ 2622 ձեռագրում՝ բաղկացած տարբեր ժամանակներում և վայրերում գրված, իրար հետ բովանդակային կապ չունեցող 15 գրչագրերից<sup>3</sup>: Գրիչ-հեղինակի էջակալմամբ «Վահան ուղղափառաց»-ը 44 էջ է (թերթ 21ա-42բ) սահուն և ընթեռնելի շղագրով:

Սուրբգրային մեջբերումներում հեղինակը երբեմն կատարել է աննշան փոփոխություններ՝ ընդհանուր շարադրանքին ավելի համապատասխանեցնելու նպատակով, որոշ հատվածներում պարզապես վերապատմել է այս կամ այն դրվագը: Բնագիրը կետադրել ենք՝ հետևելով ժամանակակից կանոններին: Եթե սուրբգրային տեղին վկայակոչված է ուղղակիորեն շարադրանքի մեջ, թողել ենք նույնությունը, իսկ սկզբում լինելու պարագայում տարել ենք վերջ և առել փակագծերի մեջ՝ բնագրից զատորոշելու համար: Ուղղակի մեջբերումներին ավելացրել ենք չակերտներ, անուղղակի հղումների պարագայում նշել «հմմտ.», կատարել ենք որոշ ճշգրտումներ և հավելումներ: Հեղինակը բնագրային որոշ ծանուցումների և լրացումների համար կիրառում է փակագծեր ( ), ուստի մեր բոլոր հավելումներն, այդ թվում՝ սուրբգրային հղումների, նշել ենք աստղանիշով (\*):

## ԲՆԱԳԻՐ

### Գիրք, որ կոչի Վահան ուղղափառաց

Յուրում աւանդին նախ՝ բանք զպնդութենէ պահոց, երկրորդ՝ բանք նշմարտութենէ բարեխօսութեան ամենայն սրբոց հնոց և նորոց, երրորդ՝ զընդունելութենէ և զերկրպագութենէ պատկերաց՝ հաստատեալ վկայութեամբք Աստուածաշունչ սուրբ գրոց: Ի հայրապետութեան տեառն Յովհաննու արժանընտիր կաթողիկոսի Ամենայն Հայոց և ասպետի: Հրամանաւ և ծախիւմ աստուածարեալ, առաքելաշախիղ վիճակաւոր առաջնորդի և մետրապոլիտի

<sup>2</sup> Ա. Մելքոնյան, «Հովսեփ վարդապետ Արցախեցու «Վահան Ուղղափառաց» երկը և դրա հրատարակության արգելք», *ԲՄ* 39, 2025, էջ 190-201: Նշյալ հոդվածում անդրադարձել ենք նաև երկի գրության հանգամանքներին և ընդհանուր կառուցվածքին, այսպիսով, այն կարելի է համարել սույն հրատարակության ընդարձակ առաջաբան:

<sup>3</sup> Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Ը, խմբ.՝ Գ. Տէր-Վարդանեան, Երևան, 2013, էջ 751-768:

Հայոց Ղարաբաղու և այլոց՝ տեառն Բաղտասարայ, իշխանագնեայ Հասան-Ջալալեան սրբազան արհեպիսկոպոսի և ասպետի: Յորդորմամբ վերոյ յիշեալ արհոյն՝ հաւաքեալ բանք նուաստագոյն Յովսեփայ սևաորի Արցախեցոյ՝ ի միաբանութենէ սրբոյ վանացն Գանձասարու, ի Շուշի, 1838 ամի Տեառն, ՌՄՁէ:<sup>4</sup>

### Յաղագս պահոց

Գրի ի Մատթէոսի Գ 2. «Եւ պահեալ զֆառասուն տիւ և զֆառասուն գիշեր, ապա ֆաղցեալ»: Հարցանեմ քեզ, ո՛վ լուծիչ պահոց ամենից, Քրիստոս, վասն ի՞նչ պահեաց պահս, եթէ վասն այլոց: Յայտ իսկ է, թէ ո՛չ վասն իւր պահեաց, զի ինքն անմեղ էր: Որպէս նախատելով զհրէայսն՝ ասէր. «Ո՛վ յանդիմանեսցէ զիս վասն մեղաց» (\*Յովհ. Ը 46): Ապա յայտ է, թէ վասն մեր պահեաց պահս: Ուրեմն, չես կարօղ սնոտի պատճառս բերելով հաստատել զպասակերութիւնդ և մնալ առաջի մարդկան պարզերես: Գիտեմ, զիտեմ, զի հանդերձեալ ես ասել՝ Քրիստոս ամենակարօղ Աստուած էր, կարողացաւ մնալ անստաղ զֆառասուն տիւ և զֆառասուն գիշեր: Ընդունիմ և ես զայդ: Բայց կարօղ ես յամենայն պահոց աուրս հրաժարիլ ի զօրեղ կերակրոց՝ զորս ստորև ունիմք ծանուցանել պասակերիդ:

Գրեալ կայ ի մարգարէութեանն Դանիէլի Բ գլ., թէ յորժամ գերեաց Նաբուգոդոնոսոր զՅովակիմ արքայ Իւրայելի ամենայն ժողովրդովք հանդերձ և տարաւ ի Սենայար՝ ի տուն կոոց իւրոց, սկսաւ յորդոցն գերութեան և ի հեթանոսաց ժողովել մանկունս ուշիմս և մտաւարժս և տալ յուսումնարանն և կարգեաց նոցա զօրեղ կերակուրս և գինիս: Պատուիրեաց վարժապետաց, զի վարժեսցեն և զկնի երից ամաց կացուցեն առաջի թագաւորին, որ տեսցէ թագաւորն, թէ ո՛րն է վարժեալ և իմաստնացեալ, կամ ո՛րն յիմաստից պակաս մնացեալ: Բայց էին ի ժողովեալ մանկունս յորդոցն գերութեան՝ Դանիէլ, Անանիա, Միսայել և Ազարիա, որք ուխտեցին պահս պահել: Եւ ո՛չ կերան ի սահմանեալ կերակրոյ թագաւորին, և ո՛չ ի գինւոյ նորա ըմպէին, այլ ունդս ուտէին և ջուր ըմպէին: Այլ դէմք իւրեանց և շնորհք իմաստից առաւել պայծառագոյն երևէին առաջի թագաւորին, քան զայլ ուսումնակիցս իւրեանց: Ահա՛ յայտնի յարացոյց և կատարեալ օրինակ պահոց, որ ի հարկէ զայսպիսի պահս պահողաց հոգիքն պայծառափայլ երևին առաջի երկնատր թագաւորին Քրիստոսի: Տեսե՛ր, ո՛վ դու, նենգատր պասակեր, զի Դանիէլ և ընկերք նորա տեսին, որ ի թագաւորէն սահմանեալ կերակուրքն էին մտելէն և իւղեղէն կամ այլ ինչ զօրեղ կերակուրք, հրաժարեցան յայնցանէ և սկսան ունդս, այսինքն՝ ոսպն, սիսեռն, բակլայ, լուբիայ և այլն ուտել:

<sup>4</sup> Նոր տողից գրված է «Ի», այնուհետև բաց է թողնված, հավանաբար հրատարակության տեղը, թիվը և այլ տվյալներ նշելու նպատակով:



անիցոմ, որպէս և այլն, այլ արթունք և զուարթունք եղիցոմ: Զի որք ննջեն, ի գիշերի ննջեն, և որք արբենան, ի գիշերի արբենան»:

Տեսեալ եսքերայ, թէ Արտաշէս թագաւորն, որ էր այր իւր, շարախօսութեամբ Համանայ կամի իսպառ ջնջել զիսրայելեան ժողովուրդն զամենայն, և եսքեր տիկինն, գոլով յազգէ իսրայելացոց, ի խստագոյն պահս եմուտ. «Եւ եհան յիւրմէ զհանդերձ փառաց թագաւորութեան իւրոյ, և զգեցաւ նա զհորձ նեղութեան և սգոյ, և փոխանակ պէսպէս իւրոցն և խնկոց՝ մոխրով և աղբովք ելից զգլուխ իւր, և զմարմին իւր, ի բագում աշխատութիւնս խոնարհեցոյց, և մատուցեալ բագում աղօթիք և պահօք, հայցէր ի Տեառնէ Աստուծոյ Իսրայելի և ասէր. Տէր Աստուած մեր և թագաւոր մեր, զի վտանգ մեծ է առաջի մեր, և լսէի ի ծննդենէ իմմէ ի հայրենի ազգէն իմմէ, թէ դու, Տէր, ընտրեցեր զԻսրայել յամենայն ազգաց ի ժառանգութիւն քեզ յափտեան, և զամենայն խոստմունս քո կատարեցեր: Տէր Աստուած մեր, օգնեա՛ մեզ, զի մի՛ իսպառ ջնջեսցին ժողովուրդ իմ» (\*Եսթ. ԺԴ 2-5): Եւ արդ՝ զի մի յերկարեացին բանք պատմութեանցս, կարն ի կարնոյ ասացոմ: Յետոյ կոչեաց եսքեր տիկինն զթագաւորն և զՀաման՝ զերկրորդն արքայի, ի սեղան իւր: Եւ իբրև ընդ գինիս եմուտ թագաւորն, ասէ ցեսքեր տիկին իւր. Զի՞նչ են խնդիրք քո, եղիցի քեզ մինչև ցկէս թագաւորութեան իմոյ: Պատասխանի ետ եսքեր և ասէ. Եթէ գտի շնորհս առաջի քո, արքայ, բան աղաչանաց իմոց ընդունելի լիցի: Վասն զի վաճառեցամ ես և ժողովուրդ իմ ի կորուստ և ի ծառայութիւն մեք և որդիք ազգի մերոյ: Արդ, ոչ է առնն բանասարկուի ի տան թագաւորի լինիլ: Եւ ասէ թագաւորն. Ո՞ր է, որ իշխեաց առնել զիրս զայս: Ասէ եսքեր. Այս այս թշնամի է Համան: Եւ ասէ ցարհայն Բուգարթան մի ի ներհինեաց անտի. Ահա Համան փայտ մի կանգնեաց յիսուն կանգնեան: Ասէ թագաւորն. Կախեսցի՛ Համան իմքն զմանէ: Եւ կախեսցին զՀաման զփայտէն, զոր պատրաստեալ էր Մորթիէի՝ ազգականին եսքերայ տիկնոջն: Եւ ասպ դադարեաց թագաւորն ի ջնջելոյ զամենայն ազգս Իսրայելի (\*Եսթ. է 1-10): Եւ եղև ուրախութիւն մեծ ազգին իսրայելացոց, որ այնուհետև արարին տօնախմբութիւն մինչև ցայսօր ժամանակի: Արդ, որպէս եսքեր տիկինն պահս պահեաց, քննազգեստ և աղբագլուխ եղև, և այլն, որոյ պատճառաւ ինամս էարկ Աստուած ի սիրտ Արտաշիսի թագաւորին՝ դառնալ ի կոտորածէ ազգին իսրայելացոց, և վասն նոցա զշարախօսն զայն Համան ետ կախել զյիսուն կանգնեան փայտէն: Նոյնպէս և մեք, եթէ զսուրբ պահս պահիցեմք և առ Տէր Աստուած մեր յաղօթս կայցեմք, ազատեալ լինիցիմք ի յափտենական մահուանէ, և դժոխայինն Համան կախեսցի զփայտէ յափտենական տանջանաց:

Եւ յորժամ Կիրոս արքայ պարսից յազդեցութենէ Տեառն Աստուծոյ հրաման արար ամենայն գաւառաց եղելոց ի թագաւորութեան իւրում երթալ շինել զտաճարն Երուսաղէմի. «Եւ յարեան իշխանք հայրապետաց որդոցն Յուդայ և Բենիամինի և քահանայք և ղևաացիք ամենայնքն, ելանել յերուսա-

ղէմ և շինել զտանարն Աստուծոյ» (Բ եգր. Ա 5): Առ հանապարհան առ եզերք Տօնալիս գետոյ սկսան իշխանն հայրապետաց, քահանայք և առհասարակ ամենայն ժողովրդականք պահս պահել, զի շինեսցին աներակին Երուսաղէմի և ամենայն Հրէաստանի, և շինեսցի տանարն Աստուծոյ վերստին: Արդ, եթէ նոքա վասն մարմնատր Երուսաղէմի շինութեան և նորոգութեան տանարին պահս պահէին, զիա՞րդ ապա մեք ո՛չ պահիցեմք պահս, որ հաւատացեալս ամենայն քաղաք եմք Աստուծոյ կենդանոյ, տանար և բնակարան Ամենասուրբ Երրորդութեանն՝ որպէս ասաց Աստուած. «Դուք տանար Աստուծոյ կենդանոյ էք» (\*Ա. Կորնթ. Գ 16), և այլն:

Ո՛վ երանելի պասակեր, յայտնի է ամենեցուն, թէ այս ամենայն վկայութիւնք գպահոց, որք նոխաբար ասացան, ի գօրեղ կերակրոց հրաժարելն է: Զօրեղ կերակուրք են միսն և ի մսոյ ելեալ կաթն, պանիրն, մածունն, հաւն և ի հաւէ ելեալ ձուն, և այլ ամենայն իւղք: Գիտեմ, զի դու ոչ ընդունիս զհայրապետաց վկայութիւնն գպահոց՝ ասելով՝ հայրապետն ինձ նման մին մարդ էր: Դու տես, թէ ո՛րպէս զաշտոյ խառնելով զառաքելոյն վկայութիւն առնեմ քեզ ակներև: Գրէր Ա. Կոր. Ը 13. «Վասն որոյ եթէ կերակուր գայթակղեցուցանէ զհաւատացեալ եղբայրն, ո՛չ կերայց զմիս յափտեան»: Եւ ի Հռովմ. ԺԴ 21 ասէ. «Լաւ է ո՛չ ուտել զմիս, որով եղբայրն քո գայթակղի, կամ գրէ, կամ տկարանայ»:

Ահա՛ այսոքիկ վկայութիւնք յայտ յանդիման ցուցանեն յաւուրս պահոց զհրաժարիլն ի մսոյ և յեղելոց անտի: Հաւատացե՛ր դու ինձ, ո՛վ պասակեր, զի կրկնակի մեղանշես մահացօրէն, զպասն աներկիւղ ուտելովդ և ապա ասելովդ, թէ՛ պաս ուտելն մեղք չէ: Բայց գիտեմ, զի խղճմտանքի ի ներհաստ խայթեն զքեզ, որով և գիտես զպաս ուտելոյ մեղք լինելն: Այլ որովհետև ունակացեալ ուտես զպասն և ոչ զգաս ի խայթելոյ խղճմտանացո՞ր որպէս ասէր առաքեալն առ հռովմայ[եցիս] ԺԴ 23. «Բայց որ խղճէն, թէպէտ և ուտիցէ, դատապարտեալ է, զի ամենայն ինչ, որ ոչ է ի հաւատոց, մեղք է»: Որպէս թէ ասէր՝ որ գիտէ և ուտէ, նա չէ հաւատաւոր, այլ անհաւատ: Դիցումք, թէ այսօր վկայութիւնքս, որք հաստատեն զպահան պահելի, ամենևին չկան՝ բնական ուշիմութեամբ խօսեսցումք, զի պասն ոչ միայն հայոց ազգին է, այլև ամենայն ուղղափառ քրիստոնէից, և մանաւանդ նոցա պասն շատ է, քան զմերն: Զի գՔրիստոսի ծննդեան պասն զեօթն օր պահեն ազգն մեր հայոց, և ազգն յունաց՝ զփառասուն օր: Բայց դու գայտոսիկ գիտելով և յաւուրս պահոց ուտելով զմտեղէն և զիւղեղէն կերակուրս՝ գայթակղեցուցանես զմիամիտ եղբայրն քո զհայ քրիստոնէայն, ըստ այնմ. «Դու ո՛չ մտանես, և որք մտանենն, արգելու» (\*Մատթ. ԻԳ 13): Ասեմ քեզ, ո՛վ պասակեր, որ դու յայտնապէս զհայրապետաց եղեալ պասն ընդունիս ոչ, զառաքելոցն զի՞նչ կարօղ ես ասել: Եւ եթէ զառաքելոցն ևս ոչ ընդունիցիս, ոչ կարեմ համարձակիլ ասել, ուրեմն դու անհաւատ ես, զի շհաւատացօղքն առաքելոց ոչ հաւատան մարգարէից:

Որ անհաւատ ոչ հաւատան մարդէղութեանն Քրիստոսի, զորմէ խօսեցան ամենայն մարգարէք: Եւ մանաւանդ ոչ ևս հաւատաս Քրիստոսի, որ ասէ. «Այս ազգ ո՛չ ելանէ, եթէ ոչ՝ աղօթիմ և պահօք» (\*Մատթ. ԺԷ 20):

Եւ արդ, զայսման զրոյցս, որ վասն պահոց, բաւական համարեալ՝ խօսեսցոմ զայնպիսի պահոց, որ խստագոյն իցէ, քան զամենայն վերոյ ասացեալ պահսն: Նինուէացիք, որք քարոզութեամբն Յօնանու մարգարէին դարձան ի գղջումն և յապաշխարութիւն, ի վերայ մեղաց իրեանց, ի խստագոյն պահս անդեցան յոյժ: Եւ հաւատացին արք նինուէացիք յԱստուած և քարոզեցին պահս և քորձ զգեցան ի մեծամեծաց մինչև ցփոքունս: Էհաս բանն առ թագաւորն նինուէացոց, յայինն՝ քարոզութիւնն Յօնանու, յարեալ յարթոյ իւրմէ և մերկացաւ զթագաւորական պատմունանն իւր, զգեցաւ քորձ և նստաւ ի վերայ մոխրոյ: Եւ պատմեցաւ և քարոզեցաւ ի թագաւորէն և ի մեծամեծաց իւրոց, թէ մարդ և անասուն, իաշն և արջառ մի՛ ինչ ճաշակեցեն կամ ճարակեցեն, և մի՛ ջուր արբցեն: Եւ աղաղակեցին արտի մտօք առ Աստուած, և դարձան իւրաքանչիւր ի ճանապարհաց իրեանց շարաց: Եւ եղև, զի տարակուսեցան ի կողմանէ փրկութեան անձանց իրեանց յաղագս շարաշար յանցանաց իրեանց, ասելով՝ Ո գիտասցէ, փոշիմանեցէ՛ այսիննն ներեցէ Աստուած, և դարձցի ի բարկութենէ իւրմէ, և մի՛ կորիցոմ: Եւ ետես Աստուած զգործս նոցա, զի դարձան իւրաքանչիւր ի ճանապարհաց իրեանց շարաց, զղջացաւ Աստուած ի վերայ շարեացն, զոր սկսաւ առնել նոցա, և ոչ արար (հմմտ. Յովման Գ. 5): Տէ՛ս դու, ո՛վ պասակեր, զգերապահութիւն նինուէացոցն և զարմացի՛ր յոյժ, զի նոքա ոչ միայն հրաժարեցան ի զօրեղ կերակրոց զատուս հինգ, այլև ի ցամաք հացէ, ի հնդոց և ի ջրոյ, նաև անասունն նոցա՝ ի խոտոյ և ի ջրոյ: Որք չունէին անասունն պարտականութիւն պահելոյ զինքեանս ի խոտոյ և ի ջրոյ, այլ պահք անասնոցն զպահս խստութեան բանականացն նինուէացոց յայտ առնէին:

Այլ գիտելի է, զի պահն բաժանի ի ծոմապահութիւն, յովտապահութիւն, յինսապահութիւն, ի հասարակ պահս, ի մշտապահութիւն կամ ի գերապահութիւն: Ծոմապահութիւնն է, յորում ոմանք պահեն մինչև ցերեկոյ և ուտեն զհոգեպահիկ կերակուր՝ հրաժարելով ի զօրեղ կերակրոց: Ովտապահութիւնն է, յորում ոմանք ովտա եղեալ անձանց պահեն պահս շաբաթ մի, ամիս մի, տարի մի, և այլն: Յինսապահութիւնն է, յորում ոմանք պահս պահեն յամենայն տարի երկուս յիսունս: Հասարակ պահք են, յորում ամենայն քրիստոնէայք պահեն հրաժարելով ի մտոյ և յայլ զօրեղ կերակրոց: Մշտապահութիւնն կամ գերապահութիւնն է, յորում ոմանք զամենայն ատուս պահս պահեն նոյնպէս հրաժարելով ի մտելէն, յիւղելէն և յայլ զօրեղ կերակրոց: Ընդ մշտապահութեան դասի և պահք ոմանց, որք զամենայն ատուս և ի կեանս իրեանց պահեն ծոմով զչորեղշաբ[աթ] և զուրբաթ

աուրսն մինչև ցերեկոյ: Ընդ մշտապահութան կարէ դասիլ և ծումապահութին ոմանց, որք ի տարին բոլոր թէ՛ պահք և թէ՛ ուսիք ծոմ պահեն մինչև ցերեկոյ և ապա լուծանեն զպահոց և զուտեաց կերակուրն:

Պահք բաժանին դարձեալ ի հոգեկանն և ի մարմնականն: Հոգեկան պահքն է, որ հաւատացեալք պահեն զինքեանս ի հպարտութենէ, ի նախանձուէ, յանշահ բարկութենէ, ի ծուկութենէ, յոխակալութենէ և ի բամբասանաց կամ յագահութենէ: Իսկ մարմնական պահք, յորոց պարտի հաւատացեալն պահել զինքն, են որկրամոլութիւն, իգամոլութիւն, արուամոլութիւն, ազգապղծութիւն և շատակերութիւն: Եւ այսոքիկ խառն ընդ միմեանս իմացեալ լինին, զի եթէ ոչ իցէ, ի մարդն հոգի մտաւոր սոսկ մարմինն ոչ կարէ առնել զարբեցութիւն, զագահութիւն և այլն: Այլ յատկապէս պահքն մարմնական են, զորս ասացաք ի վեր, թէ յաւոր պահոց պարտի հաւատացեալ քրիստոնէայն պահել զինքն ի մսեղէն և յայլ զօրեղ կերակրոց: Ասացաք հոգի մտաւոր, զի ուր իցէ հոգի մարդոյ, ի հարկէ անդ լինի կամ գործողութիւն բարեգործութեան և կամ գործողութիւն մոլութեան:

Միայն այսքան պարտիմք իմանալ, թէ ուղղափառք ոչ միայն պարտական են պահել զինքեանս ի մսեղէն, յիւղեղէն կամ յայլ ինչ մարմնոյ զօրացուցիչ կերակրոց և կամ ի մերձատրութենէ ամուսնական գործողութեան կանանց, այլ և ընդ նոսին շարունակաբար պահել պարտին զինքեանս ի հպարտութենէ, ի նախանձուէ, յոխակալութենէ, յագահութենէ, ի բամբասանաց, յանշահ բարկութենէ և այլն: Զի եթէ ոք պահիցէ պահս և ոչ թողուցու զհպարտութիւն իւր, այնպիսին սատանայի նման լինի, որպէս Քրիստոս զամբարտաւան հրէայս որդի սատանայի ասէր. «Դուք ի հօրէ սատանայէ էք և զցանկութիւն հօրն ձերոյ կամիք կատարել» (Յովն. Ը 44): Եթէ ոք ունի զօրինաւոր պսակեալ կին և թողու զայն և շաղաշարի ընդ պոռնիկս, որ ոչ իցէ օրինօք պսակեալ ընդ նմա, այսինքն թողեալ այր զկին իւր և թողեալ կին զայր իւր առանց դատաքննութեան, ոչ է օրինաւոր: Վասն այնորիկ ասի յես. (\*=Երեմիա) Ե 7-(\*8). «Ուր՞վ այսոքիմք հաշտեցայց, ասէ Աստուած, ընդ ղեզ որդիքն Իսրայէլի թողին զիս և երդնուին ի շաստուածսն իւրեանց, վասն ի պոռնկոցս երթալոյ կամ վասն իւրաքանչիւր ձի լինելոյն Իսրայէլի և վրնջելոյն առ իւրաքանչիւր կին ընկերի իւրոյ»: Եւ այլն մնացէ խոհական ուղղափառաց քննելի:

Բարբանջեն լուրերականք բազում անգամ, թէ կերակուր ոչ պղծէ զմարդ: Մեք ուղղափառս իսկ ասեմք, թէ կերակուր ոչ պղծէ զմարդ: Բայց թէ ո՞ր կերակուր է, որ ոչ պղծէ զմարդ, ոչ գիտեն: Զի հրէից ազգն զանլուայ ձեռօք հաց ուտելն պղծութիւն համարէին, զյանլուայ ամանի մէջ կերակուր ուտելն կամ զայլազգեաց կերակուր ուտելն պղծութիւն համարէին: Իսկ Քրիստոս ասէր. «Այդպիսի կերակուրքդ արտաքուստ ի ներքս մտանեն և ընդ որովայնն ելանեն, ուստի և ոչ պղծեն զմարդ» (Մար. Է 18): Այլ ի ներքուստ՝ ի սրտէ

մարդկան խորհուրդ չարութեան ելանեն շնութիւն, պոռնկութիւն, գողութիւն, սպանութիւն, նենգութիւն, գիշութիւն, չարակնութիւն, հայհոյութիւն, ամբարտաւանութիւն, անզգամութիւն. այս ամենայն չարիք ի ներհուստ ելանեն և պղծեն զմարդ:

Տեսե՛ր, լութեակա՛ն, որ զաւետարանական բանից մեկնութիւնն դեռևս չես իմացեալ: Գրի Հոռմ. ԺԴ 2. «Ոմն հաւատայ ուտել զամենայն, և որ հիւանդն իցէ՛ բանջար կերիցէ»: Բառս (հաւատայ), դնի փոխանակ բառիս (ախորժէ, ըշտահն ֆաշէ ուտել), իբր թէ ասէ, ոմանց ուղղափառաց՝ ըշտահն ֆաշէ ուտել զմիս նապաստակի, խոզի, գայլառի, կատուառի կամ զկերակուր այլազգեաց: Ասաց առաքեալն. «Եւ որ հիւանդն իցէ՛ բանջար կերիցէ» (\*Հոռվմ. ԺԴ 2): Այս բան, բաց ի նկարագրական մտաց, իմացեալ լինի և նմանական միտք յինքեան: Իբր զի որպէս տկարագոյն լինելով ստամոքս հիւանդին՝ ոչ կարէ մարսել զգօրեղ կերակուրն, այլ բանջարեղէն շօրվայ պիտոյ է նմա: Նոյնպէս ստամոքս ապաշխարողաց, գոլով տկարացեալ զանազան յանցանօք, պարտին ուտել զկերակուր պահոց բանջարեղինաց, զի սակաւ առ սակաւ զօրացի հոգոյ նոցին ստամոքս, ապա թէ հազիւ կարողանայցեն ուտել զմարմին Տեառն Յիսուսի:

Դարձեալ գրեալ է Հոռվմ. ԺԴ 5. «Ոմն պահէ օրբսօրէ, և ոմն պահէ զօր հանապազ, զի իւրաքանչիւր ոք զիւր միտս հանեսցի», իբր թէ ոմանք ուղղափառաց պահեն ըստ պատշաճի ատուրցն. ըստ պահելի ատուրն պահեն և ըստ ուտելի ատուրն ուտեն: Իսկ ոմանք յամենայն կեանս իւրեանց միշտ պահեն: Ասացաւ՝ իւրաքանչիւր ոք զիւր միտս հանեսցի, զի միշտ պահս պահելն և երբեմն ուտելն, ըստ իւրաքանչիւր կամաց է: Ըստ այսմ է և այս. «Որ ուտէ՛ Տեառն ուտէ, և գոհանայ զԱստուծոյ, և որ չուտէ, Տեառն չուտէ, և գոհանայ զԱստուծոյ» (Հոռմ. ԺԴ 6): Որպէս թէ ուղղափառք, երբ ուտեն, ըստ հանոյից կամաց Տեառն ուտեն և գոհանան զԱստուծոյ: Եւ երբեմն չուտեն պահս, ըստ հանոյից Տեառն չուտեն, և գոհանան զԱստուծոյ: Իսկ ի մէջ լութեականաց ոչ լինի երբեմն ուտել և երբեմն պահս պահել, այլ յամենայն կեանս իւրեանց միշտ ուտեն պաս՝ եթէ զմեծ պասն, եթէ զշաբաթապահս և եթէ զչորեկշաբաթս և զուրբաթս ամենայն:

Սոյնպէս է և այն, որ ասի. «Որ ուտէ, նա մի՛ անգոսնեսցէ զնա, որ ոչ ուտէ, և որ ոչ ուտէ, մի՛ անգոսնեսցէ զնա, որ ուտէ» (Հոռմ. ԺԴ 3): Արդարև զարմանամք ուղղափառքս ի վերայ մտաց լութեականաց, զի անա աստէն առաքեալն երբեմն լուծանել ասէ զպահս յատուրս ուտեաց, և երբեմն պահել յատուրս պահոց: Զայս ամենայն առաքեալն ֆրիստոնէից օրինադրեաց ամենեցուն, իսկ լութեականք զուտելն զպահս միայն ասեն և ոչ զչուտելն, ուրեմն նոքա ոչ են ֆրիստոնեայք: Որովհետև զմի կողմն միայն ասեն, այսինքն՝ զուտելն, հակառակ են առաքելոց, որովք և հակառակ Աստուծոյ և աստուածային օրինաց և պատուիրանաց իսուսին: Զի որպէս ասացաք, առա-

ֆեալին ի հանոյս Աստուծոյ սահմանեցին զպասն, որ իբրև զլոյս արեգական յայտնի են ամենայն ուղղափառաց: Զի երբեմն առաջեալն զգուշացուցանէ զուղղափառս՝ ասելով. «Աղաչեմ զձեզ, եղբա՛րք, դիտել զայնպիսիսն, որք զհերձաձս և զգայթակղութիւնս առնիցեն արտաբոյ հոգևոր ուսմանն, զոր դո՛ւք ուսայք յինէն, այլ խորշեցարո՛ւք ի նոցանէ, զի այնպիսիքն ոչ ծառայեն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, այլ իւրեանց որովայնիս, և փաղցրաբանութեամբ կամ զովաբանութեամբ պատրեն գսիրտս անմեղաց և յաղանդս իւրեանց դարձուցանեն» (\*Հոով. ԺԶ. 17-18): Եւ երբեմն լալով նախատէր զլուծեալականս և զայլ որովայնամոլս, և խաչին Քրիստոսի թշնամիս զնոսս ասէր. «Լալով ասեմ զթշնամեաց խաչին Քրիստոսի, որոց կատարածն կորուստ է, որոց Աստուած է որովայնն և փառք ամօթն իւրեանց. այնպիսիքն զերկրաւորս և եթ խորհին» (Փիլիպ. Գ 18):

Այսօր քաւականացի ի կողմանէ պահողացն զպահս և կերողացն զպաս: Վասն որոյ խնդրեմք ի Քրիստոսէ, զի ծագեսցէ զլոյս շնորհաց պահեցողութեան ի սիրտս պասակերաց և խափանեսցէ զբռնութիւն որովայնամոլութեան նոցա. ամէն:

### **Յաղագս բարեխօսութեան սրբոց**

Եթէ գոյ մարմնաւոր դատաւոր, ապա գոյ և հոգևորն, զի պատկեր և օրինակ մարմնաւոր դատաւորութեան է ըստ ամենայնի նշանակ հոգևորական դատաւորութեան: Զորօրինակ, եթէ ուրո՛ւք ի մարդկանէ լինիցին յանցանք ինչ, ապաւինեալ ի մարդիկս, որք են ի դրան դատաւորին, պաղատի և աղաչէ զնոսս բարեխօս լինիլ առ դատաւորն, զի ի պատիւ երեսաց արանցն դատաւորն թողցէ և ներեսցէ յանցանաց յանցաւորին: Նոյնպէս և մեք, ունելով զբիւրակերպ տեսակ մեղաց, պարտիմք ի մէջ սուրբ եկեղեցոյ պաղատիլ արտասուօք և աղաչել զսուրբս Աստուծոյ, զի վասն բարեխօսութեան նոցա թերևս գթասցի ի մեզ Աստուած և ներեսցէ յանցանաց մերոց: Եւ զի որպէս երկրպագելի և պատուելի են սուրբք ի պատկերս իւրեանց, նոյնպէս ընդունելի է և բարեխօսութիւն նոցա:

Գրի յեկից ԼԲ. Երբ յամեաց Մովսէս ի լեռան Սինայի, կոտեսցաւ իւրայելեան ժողովուրդն ի վերայ Ահարօնի և ասեն. Արա՛ մեզ աստուածս, որք առաջնորդեն մեզ և այլն: Եւ յերկիւղէ նոցա վախելով Ահարօնի, արար նոցա որք մի: Եւ ասէ Տէր ցՄովսէս՝ տեսի զժողովուրդն, զի ժողովուրդ խստապարանոց է, թո՛յլ տուր, զի սատակեցից զնոսս և շնջեցից յերկրէ և արարից զֆեզ յազգ մեծ: Աղաղակեաց Մովսէս առ Տէր և ասէ. Ընդէ՞ր բարկանաս տրտմութեամբ ի վերայ ժողովրդեան քո, զուցե ասիցեն եգիպտացիքն թէ՛ եհան զժողովուրդ իւր Աստուածն իւրեանց և տարեալ յանապատի կոտորեաց զնոսս:

Այլ լսելով Աստուած բարեխօսութեանն Մովսիսի՝ արգելաւ ի պատժոցն, զոր կամէրն առնել իւրայելացոց:

Երկու անգամ երևեցաւ Աստուած Սաղոմօնի և պատուիրեաց նմա ամենևին չերթալ զհետ կողոց, այլ պահել զպատուիրանս նորա, բայց նա ոչ լուաւ պատուիրանաց Տեառն, զի կանայք նորա խոտորեցուցին զսիրտն Սաղոմօնի զհետ կողոց իւրեանց (հմմտ. Գ Թագ. ԺԱ): Վասն որոյ բարկացաւ Տէր ի վերայ Սաղոմօնի և ասէ. Պատառելով պատանեցից զթագաւորութիւնդ ի ձեռանէ՛ քոմմէ՛, և տաց զդա ծառայի քոմմ: Բայց ի քո ատուրս ոչ արարից վասն Դաւթի հօր քո, այսինքն՝ վասն բարեխօսութեան և բարերարութեան նորա: Սակայն զամենայն թագաւորութիւնդ ոչ առից, այլ գաւազան մի տաց որդոյ քոմմ վասն Դաւթի ծառայի իմոյ:

Լուրերականք բարբանջեն, թէ սուրբ յաննիթական կայանս իւրեանց լինելով, յոյժ հեռի են ի մէնջ, ուստի և աղաչանք մարդկան ոչ հասանեն առ նոսա: Ո՛վ անհաւատութեանս, ո՛չ ապաքէն Աստուած յայտնէ նոցա, զի են իբրև հրեշտակք: Զորօրինակ, յասել Աստուծոյ՝ Դաւազան մի տաց որդոյ քոմմ (\*հմմտ. Գ Թագ. ԺԱ. 13). յայտնի էր հոգոյն Դաւթի, թէ որդի իւր Սաղոմօնն յաղագս կողոցն պաշտելոյ վերացաւ թագաւորութիւն նորա, և վասն թոռին իւրոյ միայն եղև Դաւիթ բարեխօս առ Աստուած, որ ետ գաւազան մի թագաւորութեան որդոյ Սաղոմօնի: Նոյնպէս և այն յեսայ Լէ. Վերակացու եղէց քաղաքիդ այդմիկ ապրեցուցանել վասն Դաւթի ծառայի իմոյ: Որպէս ի գալ զօրացն ասորեստանեաց, Եզեկիաս թագաւորն իւրայելացոց հանդերձ ամենայն ժողովորդով ի նեղ մտեալ աղաչէին զսուրբ մարգարէն Դաւիթ (որ յայնժամ մեռեալ էր) վասն փրկութեան քաղաքին Երուսաղէմի, և հոգի Դաւթի եղև բարեխօս առ Աստուած: Որ և առաքեաց Աստուած հրեշտակս և կոտորեաց զգօրս ասորեստանեաց, և մնացեալն փախստական գնացին յաշխարհն իւրեանց: Նմանապէս քաղաք մարդկային բնութիւնս յարածամ պաշարեալ լինի ի բազմութենէ զօրաց աներևոյթ ասորեստանեաց, յարածամ աղաղակէ առ ամենայն սուրբս Աստուծոյ, զի բարեխօս լիցին առ Աստուած, որ ազատեցէ յամենայն հոգեկան և մարմնական փորձանաց առաքմամբ բարի հրեշտակի, որ հանապազ վիճէ ընդ սատանայի և կոռի ընդ նմա՝ որպէս երբեմն կոռէր Միհայել հրեշտակապետ վասն մովսիսեան մարմնոյն ընդ սատանայի (Յուդ. Ա. (\*9)): Զի սատանայի կամքն այն էր, որ իւրայելացիք զՄովսէս իբրև զԱստուած պաշտեցեն և փառաւորեցեն: Գրի Թուոց ԺԲ գլ.՝ Եւ տրանջէր ժողովուրդն չարաչար առաջի Տեառն, և լուաւ Տէր և բարկացաւ արամոտութեամբ և բորբոքեցաւ հուր ի նոսա ի Տեառնէ և եկեր զմասն ինչ բանակին: Եւ աղաղակեաց ժողովուրդն առ Մովսէս և յաղօթս եկաց Մօսէս առ Տէր և դադարեաց հուրն:

Որպես երբեմն խրատել անախտ զԱռաջին կորնթացիս՝ ասելով. «Մի՛ տրտնջեցուք զԱստուծոյ՝ որպէս ոմանք ի նոցանէ տրտնջեցին և կորեան ի հռոյ անտի» (\*Ա. Կորնթ. Ժ 10): Իբրև ետես Մովսէս, եթէ փարաւօն եհաս բազում զօրով առ ափն Կարմիր ծովուն և ժողովուրդն յոյժ երկնչէին և ասէին՝ Լաւ էր մեզ ծառայել եգիպտացոցն, քան մեռանել յայսմ անապատի, և Մովսէս աղաչելով յոյս տայր ժողովրդեանն՝ ասելով՝ Պի՛նդ կացէք և տեսանիցէք զփրկութիւն ի Տեառնէ: Եւ ասէ Տէր ցՄովսէս. Զի՞ կոչես առ իս, իստեաց ընդ որդիսդ Իսրայէլի և չուեսցեն: Եւ ա՛ն զգաւագանդ և ձգեա՛ զձեռն ի վերայ ծովուն և պատառեա՛ զնա, և մտցեն որդիքն Իսրայէլի ընդ մէջ ծովուն ընդ ցամաք (հմմտ. ել. ԺԳ 13): Եւ այսպէս բարեխօսութեամբ և աղաչանօք մարգարէին Մովսիսի ազատեցան որդիքն Իսրայէլի ի ձեռաց փարաւօնի:

Որ և այժմ հոգի մարգարէին հանապազ բարեխօսէ առ Աստուած, զի ազատեցէ զմեզ ի ձեռն բարեխօսութեան նորին յանմարմին փարաւօնէ: Մովսէս օրինակ էր Քրիստոսի, գաւազանն օրինակ էր խաչին, ծովն օրինակ էր մեղաց, հին իսրայէլացիք օրինակ էին նորոց հաւատացելոց և փարաւօն օրինակ էր սատանայի: Ըստ այնմ ի շարականն՝ Որ բաժանեաց զծով աշխարհի խաչին խորհրդով և ազատեաց յանմարմին փարաւօնէ գնորս Իսրայէլ: Եւ իբրև ծարաւեցաւ ժողովուրդն իսրայէլացոց, տրտնջեցին զՄովսիսէ և ասեն. Ընդէ՛ր հանէր զմեզ յեգիպտոսէ կոտորել զմեզ և զորդիս մեր և զխաչինս մեր ի ծարաւոյ (հմմտ. ել. Ժէ): Եւ աղաչեաց Մօսէս զԱստուած և ասէ. Սակաւ է մնացեալ, թէ ժողովուրդն քարկոծ արասցեն զիս: Եւ ասէ Տէր ցՄօսէս. Ա՛ն ընդ քեզ ի ձերոց ժողովրդեանն և զգաւագանդ ի ձեռին քում, և ես հասեալ կամ յառաջագոյն քան զքեզ ի վերայ վիմին ի Քորեբ, և հարցես զվէմն գաւազանադ, և ելցէ ջուր ի նմանէ և արբցէ ժողովուրդդ: Եւ արար Մօսէս ժողովրդեանն այնպէս: Նոյնպէս և ի Նոր Կտակի ծանուցեալ հոգևոր միաբն յայտնի լինի. «Եւ ամենին զնոյն ըմպելին արբին, զի ըմպելին ի հոգևոր վիմէն, որ երթայր զհետ իսրայէլացոց, և վէմն էր ինքն Քրիստոս» (Ա. Կոր. Ժ 4):

Ազայել արքայն Ասորոց նեղել զազգն Իսրայէլի զամենայն ատուս Յովաբազ արքայի իսրայէլացոց, բայց աղաչանօք սրբոցն Աբրահամու, Իսահակայ և Յակոբայ ողորմեցաւ նոցա Աստուած և զթացաւ ի նոսա, և ոչ կամեցաւ Տէր ապականել զնոսա և ոչ ընկէց զնոսա յերեսաց իւրոց (հմմտ. Դ Թագ. ԺԳ 23): Եւ մեռոյց Տէր Աստուած զԱզայել արքայն Ասորոց և դարձաւ որդի Յովաբազու և էառ զգաղաբսն ի ձեռաց Ազայելի որդւոյն, զորս էառ Ազայել ի ձեռաց հօր նորա ի պատերազմին: Ըստ նմանութեան իսրայէլացոց և մեք աղաչեցուք զսուրբ նահապետսն զԱբրահամ, զԻսահակ և զՅակոբ, զի բարեխօս լիցին առ Աստուած, որ մեռուցէ զգօրութիւն շարութեան

աներևոյթ Ազայելին՝ Բելիարայ և դարձուցէ զգերեալ ֆաղափ բնութեան ազգի մարդկան առ իննն:

Դարձեալ, թէպէտ Մօսէս մարգարէն էառ զպատգամս յԱստուծոյ՝ գրեալս ի ֆարեղէն տախտակս, այլ իբրև էջ ի լեռնէ անտի, ետես զժողովուրդն ի յորթապաշտութեան, ազդեցութեամբ Տեառն Աստուծոյ խորտակեաց զտախտակսն (որ էր վասն ժողովրդեանն), և հրամայեաց Ղևեայ ազգին՝ առնույ իւրաքանչիւր զտուր իւր և կոտորել իւրաքանչիւր զեղբայր իւր, զընկեր իւր և զմերձաւոր իւր: Բայց յետ այնորիկ դարձաւ Մօսէս առ Տէր և ասէ. Աղաչեմ զքեզ, Տէր, եթէ թողուս զմեզս ժողովրդեանն քո, թո՛ղ, ապա թէ ոչ՝ ջնջեա՛ զիս ի դպրութենէ՛ քոմմէ, յոր գրեցեր: Ապա ընկալաւ Աստուած զբարեխօսութիւն սրբոյ մարգարէին՝ ասելով. Գնա՛ առաջնորդեա՛ ժողովրդեանն այնորիկ ի տեղին, յոր ասացի քեզ (հմմտ. Ել. ԼԲ 27-33): Նմանապէս աղաչեցո՞ւք և մեք զնոյն սուրբ մարգարէն, զի բարեխօս լիցի նա առ Աստուած, որ խնդրակատարն ձեռնհասն ամենայն խնդրողաց խափանեացէ զկամապաշտութիւն ամենայն ֆրիստոնէից, որ է երկրորդ կոռապաշտութիւն: Երկրորդ կոռապաշտութիւն ասի և ազահիլն յամենայն ինչս: Եօթն անգամ հրամանան Աստուծոյ Մօսէս մարգարէն խնդրեաց ի փարաւօնէ՛ արձակել զիսրայելեան ժողովուրդն, և ի շարձակելն փարաւօնի զժողովուրդն Աստուած ետ եօթն պատիժս եգիպտացոց: Եւ եօթն անգամ մարգարէն բարեխօս եղև առ Աստուած ըստ խնդրոյ փարաւօնի, եօթն անգամ լուաւ Աստուած բարեխօսութեան մարգարէին և վերացոյց զպէսպէս պատիժս: Յորոց մին էր և այս. ոչ արձակեաց փարաւօն զժողովուրդն, և Աստուած ետ ի պատիժ եգիպտացոց զշանաճաննն, զոր տեսեալ փարաւօնի՛ ասէ ցմարգարէն. Աղօթս արա՛ վասն իմ առ Տէր: Եւ ել Մօսէս ի փարաւօնէ և եկաց յաղօթս առ Տէր, և Տէր լուաւ աղաչանացն Մօսէսի և վերացոյց զշանաճաննն ի փարաւօնէ, ի ծառայից նորա և ի ժողովրդենէ նորա (հմմտ. Ել. Ը 31):

Ըստ նմանութեան Մօսէսի մարգարէին յաղօթս կացցո՞ւք և մեք առ ամենայն սուրբս Աստուծոյ և ջերմեռանդ սրտիս աղաչեցո՞ւք զնոսա, զի բարեխօս լիցի նա Աստուած առ խափանիչն ամենայն շարեաց, որ խափանեացէ զամենայն ներգործութիւն պէսպէս աղտեղի խորհրդոցն սատանայի և վշրեացէ զամենայն խայթողական որոգայթս նորա:

Այսֆան վկայութիւնք զբարեխօսութենէ՛ սրբոց, որք հանեալ եղեն ի Հին Կտակէ, բաականացի: Ասացո՞ւք և փոքր ինչ զվկայութեանցն, որք իցեն ի Նորոյ Կտակէ: Երանելի անտարանիչն Յօհաննէս ետես ի տեսլեանն, որ ֆսանկչորք երիցո՞ւնք անկանէին առաջի Գառիմն, և ունէին իւրաքանչիւր զքնար և բուրվառ լի ոսկով, որք են աղօթք սրբոցն (հմմտ. Յայտ. Ե 8): Արդ, հարցանեմք աստէն ցլոտերականս՝ ֆնարն և բուրվառն լի ոսկով, որք նշանակէին զաղօթս սրբոցն, վասն ո՛ր աղօթէին սուրբն, վասն ինքեա՛նց, եթէ

վասն այլոց: Եթէ ասես վասն ինձեանց աղաչէին զանարատ Գառն Քրիստոս, անկանիս յանտանելի հերձուածողութիւն, քանզի սուրբն Աստուծոյ միանգամայն ունին զկատարելութիւն սրբութեան և գերանութիւն անփոփոխ: Իսկ եթէ յաղթահարեալ ի նշմարտութենէ ասիցես վասն այլոց աղօթէին, այլն ի հարկէ ամենայն կենդանի մարդիքն են. ուրեմն վասն փրկութեան ազգի մարդկան աղօթեն: Բայց արդ, որովհետև խոստովանեցար զսրբոց աղաչանքն առ Աստուած լինիլ վասն այլոց, ի դմին կացջի՛ր և զանարգօղս բարեխօսութեան սրբոցն յորդորեսջի՛ր դառնալ յայնպիսի անհամ և անալի աղանդաւորութենէ:

Եւ դարձեալ՝ ետես ի տեսլեան անտարանիչն Յօհաննէս, որ այլ հրեշտակ եկն առ սեղանն և ունէր խնկանոց ոսկի, և տուաւ նմա խունկ բազում, զի հրեշտակն մատուցէ զաղօթս սրբոցն առ նստեալն Յիսուս ի վերայ ոսկեղեն արոտոյ (հմմտ. Յայտ. Ը. 3): Ահա յայտնապէս ցուցանէ այս Յօհաննէս անտարանչին բան, թէ հրեշտակք իսկ են բարեխօս վասն փրկութեան ազգի մարդկան, զոր ո՛չ ոք կարող է ուրանալ: Այլև առաքեալն յորդորէ զՏիմօթէոս բարեխօս լինիլ առ Աստուած վասն ամենայն մարդկան՝ ասելով. «Եւ արդ, աղաչեմ, նախանձ զամենայն առնել աղօթս, խնդրուածս, պաղատանս վասն ամենայն մարդկան, մանաւանդ վասն թագաւորաց և ամենայն իշխանաց, զի խաղաղութեամբ և հանդարտութեամբ վարեսցո՞ւք զկեանս մեր ամենայն աստուածպաշտութեամբ և սրբութեամբ: Զի այն է բարի և ընդունելի առաջի Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ զամենայն մարդիկ կամի, զի կեցցեն և ի գիտութիւն նշմարտութեան եկեսցեն: Քանզի ասէ՛ Մի է Աստուած և մի միջնորդ Աստուծոյ և մարդկան՝ մարդն Յիսուս Քրիստոս» (\*Ա. Տիմ. Բ. 1-5):

Յայսմ վայրի ցնորեալ մտօք լուրերականք ի վերայ երկուց բառիցս՝ «միայն» և «միջնորդ», որպէս թէ Քրիստոս միայն իցէ բարեխօս: Բայց արդարև զարմանալի է ի վերայ տկարամտութեան նոցա, զի յայսմ բանի ոչ գոյ յիշումն բարեխօսութեան բանի, այլ բառն (միայն և միջնորդ) ցուցանեն, թէ որ էր Աստուած և մարդ. նա միայն էր միջնորդ փրկելոյ և ազատելոյ զմարդն ի գերութենէ սատանայի՝ ի ձեռն մկրտութեան և շարշարանաց և այլն: Որպէս վկայէ Պետրոս առաքեալն. «Զի ոչ ապականացու արձաթեղինօք և ոսկեղինօք փրկեցայք ի ձերոց ունայնութեան հայրենական վատթար գործոց, այլ պատական արեամբն Քրիստոսի իբրև ամբիծ և անարատ գառնին» (Ա. Պետ. Ա. 18): Եւ գՔրիստոսէ ասի լինիլ բարեխօս վասն փրկութեան ազգի մարդկան, ըստ որում մարդ, բայց ի բարեխօսութեան նորա ոչ գոյ բառս (միայն)՝ որպէս թէ Քրիստոս ասացեալ էր՝ Ես միայն եմ բարեխօս: Որպէս ասաց հրէից՝ Ես միայն եմ անմեղ, և ո՛վ յանդիմանեսցէ զիս վասն մեղաց (\*Յովհ. Ը. 46):

Վկայէ զբարեխօսութենէն Քրիստոսի և առաքեալն Պօղոս. «Յիսուս Քրիստոս, որ մեռան, մանաւանդ թէ և յարուցեալ իսկ է և է ընդ աշմէ Հօր, որ և բարեխօս իսկ է վասն մեր» (Հռոմ. Ը 34): Տեսե՞ր, ո՛վ լուրերական, զի ահա բառս (միայն) ոչ գոյ եղեալ ընդ բարեխօս բառին, զի եթէ եղեալ լինէր, Քրիստոս միայն լինէր բարեխօս: Ասացաք, Քրիստոս ըստ որում մարդ ևս է, հարկ է նմա լինիլ և բարեխօս, զի մարդկային բերանով բարեխօս լինի վասն փրկութեան մարդկան: Որպէս Յօհաննէս անտարանիչն ևս վկայէ զբարեխօս լինելոյն Քրիստոսի. «Հա՛յր, սո՛ւրբ արա զնոսա (զառաքեալսն) նշմարտութեամբ՝ բով, զի քո բանդ նշմարտութիւն է: Այլ ես ոչ վասն նոցա միայն աղաչեմ, այլ և վասն ամենայն հաւատացելոց, զի ամենիմ մի իցեն՝ որպէս և մեք մի եմք, զի և նոքա ի մեզ իցեն: Հա՛յր, զի ուր են իցեմ, կամիմ, զի և նոքա ընդ իս իցեն, զի տեսանիցեն զփառս իմ, այսինմն՝ վայելեսցեն» (Յովհ. Ժէ 17(\*-24)): Ահա՛ յամենայն բանս յայտոսիկ Քրիստոս մարդկային բերանով բարեխօս լինի առ Հայր իւր վասն փրկութեան և պահպանութեան մարդկան: Վասն զի իւր համարի զմարդկային բնութիւնն յաղագս միատրելոյն ընդ նմա:

Այժմ թողոցմ զբան աստուածաբանութեան և զայս միայն ասացոցմ լուրերականաց, զի ի բարեխօս լինիլն Քրիստոսի առ Հայր, հա՛րկ էր նմա ասել՝ Հա՛յր, ես միայն աղաչեմ զքեզ վասն ամենայն հաւատացելոց, և ո՛չ այլ ոք: Եւ եթէ չկայ ի բարեխօսութեանն Քրիստոսի բառս (միայն), վասն է՛ր այդքան բարբանջէք, և զմիամիտս բազումս յուղղափառաց մոլորեցուցանէք յուղիղ շաղաց կրօնից նշմարտութեան: Լո՛տ լերում, զի ոչ գիտէք զԳիրս, այսինմն՝ զմեկնութիւն Սուրբ Գրոց և ոչ զգօրութիւնն Աստուծոյ, որ յայտնեալ կայ ի սուրբ Աստուածաշունչն: Մանաւանդ մեծագոյնն ի մոլորութեանց այն է, որ ասէք՝ Աստուածածինն յետ ծննդեանն Քրիստոսի ծընաւ և զբազում արու մանկունս՝ իբր վկայ բերելով զայս բան Աւետարանի. «Եւ Յօսէփ ոչ գիտէր զկոյսն Մարիամ մինչև ծնաւ զորդին իւր զանդրանիկ» (Մատ. Ա 25): Ասէք՝ ուրեմն յետ ծննդեանն զիտաց Յօսէփ զԿոյսն, յորմէ ծնան բազում արու մանկունք: Վա՛յ վա՛յ ասելով ողորմելեացդ՝ պատասխանեմ առ այդ: Աստուած, որ ասաց իւրայելացոց. «Ես եմ, ես եմ, մինչև կարի իսկ ծերացիք, ես եմ» (\*Ես. ԽՁ 4), ուրեմն՝ յորժամ նոքա ծերանային, մի՞թէ յետոյ Աստուած ոչ լինէր Աստուած:

Քրիստոս ասաց առաքելոցն. «Ահաւասիկ ես ընդ ձեզ եմ զամենայն ատուս մինչև ի կատարած աշխարհի» (\*Մատթ. ԻԸ 20), մի՞թէ զկնի կատարածին Քրիստոս չէր լինելոց ընդ առաքելոցն: Որ աղաչելով զՀայր իւր՝ ասէր. «Կամիմ, զի ուր են իցեմ, և սոքա ընդ իս իցեն, և տեսանիցեն զփառս իմ» (\*Յովհ. Ժէ 24): Խաբին լուրերականք ի բառէս (մինչև), և ըստ նմին վերաբերութիւն առնեն, այլ ո՛չ է այնպէս, զի բառս (մինչև) ժամանակելն է և նշանակէ զամենայն ժամանակս՝ զանցեալ, զներկայ և զապառնի: Քանզի

յասելն Մատթեոսի. «Եւ Յօսէփ ոչ գիտաց զնա» (\*Մատթ Ա. 25), ցուցանէ, թէ Յօսէփ ոչ գիտաց զկոյսն ի յղացման ժամանակին. այն զի սուրբ Կոյսն ի Հոգւոյն Սրբոյ յղացաւ գՔրիստոսս և ոչ յետ ծննդեանն գիտաց և ոչ յայլ ինչ ապագայ ժամանակի: Սոյնպէս իմա՛ և զօրինակացոյ ի վերոյ:

Այլ որ աւագագոյնն է, քան զամենայն շարիս, ասեն լուքերականն, և յայտնի քարոզեն ամենայն ումեմ, թէ դու միայն գՔրիստոսս Աստուած հաւատա՛, առանց զդժման և խոստովանութեան մնասչի՛ր, ապա այնուհետև Քրիստոսս ներօղ լինի ամենայն յանցանաց քոց: Զո՛րն ասացից ի մոլորութեանց լուքերականաց, որ անթիւ են:

Իսկ մեմ անցցոյմ ի հատել զբարեխօսութենէ՛ սրբոցն: Յայտ է՛ թէ ուղղափառաց եկեղեցին է բազմութիւն հաւատացելոց, որ հիմնեալ կայ ի վերայ հիման առաքելոց և մարգարէից՝ որպէս Քրիստոսս ասաց սրբոյն Պետրոսի, թէ՛ Դու ես վեմ (որով իմացեալ լինին և այլ ամենայն առաքեալքն), և ի վերայ այդ վիմի շինեցից զեկեղեցի իմ, և դրոմք դժոխոց զդա մի յաղթահարեսցեսն (Մատթ. ԺԶ 18): Դրոմք դժոխոց են պէսպէս փորձութիւնքն, զորս սատանայ յարուցանէ ի վերայ հաւատացելոց: Եւ թէ որո՞վ շինեալ լինի եկեղեցին ի վերայ հիման առաքելոց և մարգարէից (որ եկեղեցին իմանի ամենայն հաւատացեալ ազգ ուղղափառ քրիստոնէից)՝ ոչ այլով իւիմք, քան թէ բարեխօսութեամբ սրբոց: Ուստի եկեղեցին բարեխօս առնէ զամենայն սուրբս առ Աստուած վասն փրկութեան հոգւոյ, վասն փրկելոյ յերևելի և յաներևոյք ընամեաց և վասն որևիցէ գործոց յաշողութեան:

1. Օրինակ իմն. Սուրբ զԱստուածածինն և զամենայն սուրբս, բարեխօս արասցոյմ առ Հայր և այլն: 2. Բարեխօս առնեմք զնոյն սուրբ զԱստուածածինն առ Աստուած՝ միաբանել զեկեղեցի իւր սուրբ (ընդ եկեղեցոյ ուղղափառ քրիստոնէից) և պահել մինչև յօր երևելոյ գալստեան իւրոյ և այլն: 3. Բարեխօս արասցոյմ սուրբ Աստուածածին զկոյսն առ Աստուած, անեցուցանել յերկրի մերում զհաղբ բղխումն աղբերաց, զառատ պտղաբերութիւն բուսոց և տնկոց, և այլն: Այսպիսի բարեխօսութիւնք բազում են ի ժամագիրքն: 4. Նախայափտեան Բանին պատմօղ առաքեցար աշխարհի, սուրբ Յօհաննէս Մկրտիչ, աղաչեա՛ զԱստուած հարցն մերոց: 5. Որ զհրեշտակացն անտեսանելին՝ տեսեալ քո և երկրպագեալ, աղաչեա՛ զԱստուած հարցն մերոց: 6. Կարապետ արհայութեան երկնից սուրբ Յօհաննէս Մկրտիչ, որ եղև աշխարհի քարոզ փրկութեան յափտենից, աղօթիմ սորա, Տէ՛ր, լո՛ւր մեզ և ողոր[մեա՛]: Եւ այսպիսի բարեխօսութիւնք բազում են, ի գիրս շարականի: 7. Ամոյք հաւատոյ այսօր փայլին, Հա՛յր սուրբ, ի քո սուրբ եկեղեցոյ մարդասէր Փրկիչ, տօնողացս ողորմեա՛: 8. Բարեխօսութեամբ Պետրոսի և Պօղոսի՝ քո սուրբ առաքելոցն, մարդասէր Փրկիչ, տօն[ողացս ողորմեա՛]: 9. Ո՛վ երանելի Տէր սուրբ Գրիգոր, զեզ ունիմք բարեխօս առ Քրիստոսս վասն անձանց մերոց: Տեսե՛ր, ո՛վ լուքերական, զի Քրիստոսս ըստ որում է մարդ, է՛ բարեխօս առ

Հայր վասն փրկութեան ազգի մարդկան, իսկ ըստ որում է Աստուած, զայլ ամենայն սուրբս բարեխօս ունիմք առ նա ի փրկութիւն անձանց մերոց: Աստէն ևս բան աստուածաբանութեան մնասցէ, զոր ոչ կարեն ներգործել միտք լուրջականաց, այլ մեք զհարկաւոր բարեխօսութիւն սրբոցն ասացում: 10. Որ զբռնութիւն թագաւորին Տրդատայ (յառաջ քան զդառնալն ի կոստանտնուպոլսն է ի քրիստոնէական հաւատս) յշինչ համարեցար, զեզ ունիմք բա[րեխօս]: 11. Բարեխօսութեամբ քահանայապետին քո և վկային (սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին) կեցո՛ւ զմեզ: 12. Որ խոնարհեցար յանպատում փառաց, Որդի՛ Աստուծոյ, և եկիր ի կատարումն մարգարէիցն՝ նախաձայն քարոզութեանցն աննառ խորհրդով. բարեխօսութեամբ սոցա Քրիստոս խնայեա՛ ի [մեզ]: 13. Լուծե՛ր կենարար մահուամբ քո, Տէ՛ր, գերկունս մահո՛ւ իջանելով քո ի դժոխս, վերածե՛ր ընդ եզ զոգիս արդարոց մարգարէիցն ի լոյսն անստուեր. բարեխօսութեամբ սոցա, Քրիստո՛ս, խնայեա՛ ի մեզ: 14. Որ գաս հայրական իշխանութեամբ պսակել զսուրբս քո, աղօթիմ սրբոց մարտիրոսաց փրկեա՛ զմեզ ի հրոյն յափտենից միայն մարդասէր: 15. Ո՛վ երանելի և բարեպաշտ Թէոդոս մեծ թագաւոր, վասն մեր բարեխօսեա՛ առ թագաւորն երկնաւոր՝ թողոյ մեզ զմեղս մեր: 16. Որ գերազանցեալ գտար առաւել քան զբնութիւն մարդկան երանելիդ ի հարս սուրբ Անտօն, առ Քրիստոս բարեխօսեա՛ վասն անձանց մե[րոց]: 17. Ժողովեալքս հայցեմք բարեխօսութեամբ սրբոց Հոսիսիմեանց ընկա՛լ և զմեզ, Փրկի՛չ, յորդէգրութիւն ի դպրութեան կենաց<sup>5</sup>:

Ծաներո՛ւմ, ո՛վ լուրջակամ գի առաքեալն գրէ առ եփեսացիս. «Ապա այսուհետև ոչ էք օտարք, այլ քաղաքակից սրբոց և ընտանիք Աստուծոյ՝ շինեալք ի վերայ հիման առաքելոց և մարգարէից, որոյ, այսինքն՝ հիմանն, է գլուխ անկեան Յիսուս Քրիստոս (Եփես. Բ. 19-20): Յորում ամենայն շինուածն, միաւորեալ և պատշանեալ ի տաճար սուրբ անէ Տերամբ, իբր թէ եկեղեցին միաւորեալ ի Քրիստոս Յիսուս, օրըստօրէ բազմանայ անելով և լինի տաճար սուրբ աստուածային զօրութեամբն: Եւ դո՛ւ՛ եփեսացիք էք եկեղեցի շինեալ ի Քրիստոս Յիսուս, անեցեալ հաւատով լինիք ի բնակութիւն Աստուծոյ (\* Եփես. Բ 21): Դարձեալ գրէ ի Ա. Կոր. Գ 11. «Ձի գհիմն այլ ոք ոչ կարէ դնել քան զեղեալն, որ է Յիսուս Քրիստոս»: Եւ Պետրոս առաքեալն գրէ առ ընդհանուր կաթողիկէ եկեղեցի Բ 6.՝ առեալ ի մարգարէէն Եսայեայ ԻԸ 16. «Ահաւասիկ դնեմ ի Սիօն վէմ ընտիր (որ է Քրիստոս) գլուխ անկեան պատուական, և որ ի նա հաւատասցէ՛ մի՛ ամաչեսցէ»: Զեզ այսուհետև հաւատացելոցդ է վէմ պատուական, իսկ անհաւատիցն՝ «վէմ, զոր անարգեցին շինօղին, նա եղև գլուխ անկեանն» (Սաղ. ՃԺէ 22), և վէմ գլորման անհաւատից և հերձուածողաց: Եւ ի վկայութեանցս յայսցանէ յայտ է, թէ առա-

<sup>5</sup> 1-17 համարակալումը հեղինակինն է:

ֆեալֆ և մարգարէֆ շինեցին զեկեղեցին ի վերայ անյաղթելի վիմին Քրիստոսի: Չի թէպէտ Քրիստոս Փրկիչն անարգեցաւ, չարչարեցաւ և խաչեցաւ վասն փրկութեան մերոյ, բայց այնու եղև միանգամայն հիմն և գլուխ եկեղեցոյ:

Նոյնպէս յայտնի երևի, թէև հայրապետֆ հաստատեցին զեկեղեցիս ի վերայ հիման առաքելոց և մարգարէից նստեալֆ յառաքելական արթոս, յիւրաբանչիւր արթոս՝ իւրաբանչիւր հայրապետֆ իւրաբանչիւր ուղղափառ ֆրիստոնէից: Որպէս մերս էին Ադդէ կաթողիկոս Հայոց՝ ձեռնադրեալ ի Թաղէտէ առաքելոյն յամի Տեառն 30, Թէոփիլոս՝ ձեռնադրեալ ի Թաղէտէ առաքելոյն յամի Տեառն 46, յորոց մի էր և Լուսաւորիչն մեր՝ ձեռնադրեալ ի Առնդիէ յամի Տեառն 300: Սոյնպէս զկնի անցանելոյ առաքելոյն Պետրոսի ամս 13, նստաւ կաթողիկոս ի տեղի նորա Կինոս ամս 11 յամի Տեառն 66: Այսպէս և այլ հայրապետֆ նստան կաթողիկոս յիւրաբանչիւր ազգս զկնի առաքելոց իւրեանց: Ադդէ, Թէոփիլոս և Լուսաւորիչն մեր կաթողիկոսֆ Հայոց ֆարոզեցին Հայաստանեայցս աշխարհի և դարձուցին զհայոց ազգն ի հաւատս Քրիստոսի, որով և ասին նստիլ յարթոս առաքելոյն Թաղէտի: Նոյնպէս Կինոս և այլ կաթողիկոսֆ լատինացոց ասին նստիլ յարթոս Պետրոսի և Պօղոսի առաքելոցն: Եւ այսպէս իմացեալ լինի իւրաբանչիւր կաթողիկոսֆ իւրաբանչիւր ուղղափառ ֆրիստոնէից նստեալֆ յիւրաբանչիւր արթոս առաքելոց իւրեանց:

Եւ կամ այն, որ իցէ ի տեղի առաքելոյ՝ որպէս արբունի կոյսն Նունէ, որ ֆարոզութեամբ և սֆանչելեօֆ դարձոյց զՎրաստանու աշխարհն ի հաւատս Քրիստոսի, կոչեցաւ առաքելունի, յորոյ արթոն նստան բազում կաթողիկոսֆ՝ հրամանաւ Լուսաւորչին մերոյ արբոյն Գրիգորի յամի Տեառն 300: Այսպէս և Ադուանիցն, որ ի 50 ամի Տեառն սկսեալ յեղիշէի առաքելոյն՝ յաշակեալէ արբազան առաքելոյն Թաղէտի, և ի Գրիգորիսէ՝ ի թոռանէ արբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ մինչև ցայսօր շարունակաբար նստեալ են փոխանորդֆ և յաջորդֆ յարթոս նոցին:

Արդ, որովհետև ամենայն ազգաց ֆրիստոնէից հայրապետֆ նստան յիւրաբանչիւր արթոս առաքելական, այնունետև սկսան սահմանել զժամակարգութիւնս եկեղեցոյ ի վերայ հիման առաքելոց և մարգարէից, և սահմանեցին տօնս ամենայն արբոց հնոց և նորոց, յորում ի հանապազ կալն եկեղեցոյ, այսինքն՝ հաւատացելոց, յաղօթս բարեխօս առնեն զամենայն սուրբս առ Աստուած ի փրկութիւն հոգոյ յերևելի և յաներևոյթ թշնամեաց: Եւ կամ յինչևիցէ յաշողումն մարմնական կեցութեան՝ որպէս ի վերոյ եղեալ 17 թոսով վկայութիւնֆ բարեխօսութեան ամենայն արբոց եկեղեցոյս մերոյ Հայոց: Սոյնպէս լինին և բարեխօսութեանց տօնակատարումն յայլ ամենայն եկեղեցիս ուղղափառաց, այսինքն՝ ռուսաց և լատինացոց ֆրիստոնէից,

թէպէտ յայլևայլ ատուրս կամ յայլևայլ շաբաթս մեք զնոցայն կատարեմք և նոքա զմերն:

Ապա այստնեակս իբրև լուիցեն լուրերականմ, թէ բարեխօսութիւնմ ամենայն սրբոց հիմնեալ են ի վերայ առաքելոց և մարգարէից, յետս դարձցին ի հակառակելոյ ընդ ուղղափառ ֆրիստոնէից: Վասն զի իմանան, որ մոլորեալ են ի նանապարհէ ուղղափառ ֆրիստոնէից, այլ ախտացեալ են միանգամայն զախտ խաբէական և զստալիր աղանդատութեան իրեանց: Եւ կարծեն առաջնորդութեամբ հեղինակին իրեանց՝ Լուտերի ստանալ զնոր ուղղափառութիւն, որ ստուգագոյն իցէ, քան զայլ երկոտասան ազգաց ուղղափառ ֆրիստոնէիցն: Մի՞թէ այս ուղղափառութիւն իցէ, որ ընթեռնուն լուրերականմ զբան Մատթէոսի աւետարանչին, թէ՛ «Եւ ծնաւ Մարիամ զորդի իւր զանդրանիկ» (\*Մատթ Ա. 25), աներկիւղ վիժեն ի բերանոյ իրեանց, թէ ուրեմն՝ Մարիամ յետ ծնանելոյն զՔրիստոս, ծնաւ և զայլ կրտսեր որդիս: Ո՞հ եղկելի լուրերականացոյ, որ չէ այդպէս, զի Քրիստոս ասի անդրանիկ ի կողմանէ մարդեղութեանն ըստ հաւատոյ, և զի Քրիստոս է անդրանիկ որդի Հօր Աստուծոյ, և հաւատացեալքն են կրտսեր որդիք նորա՝ որդէգրեալք Քրիստոսի Հօրն երկնատրի, այսինքն՝ օղուլուղ<sup>6</sup> եղեալ: Ըստ վկայելոյ առաքելոյն, որ կոչէր առ հոռովմայեցիս, թէ՛ «Նոյն ինքն Հոգին Սուրբ վկայէ հոգոյս մերում՝ եթէ եմք որդիք Աստուծոյ, և եթէ եմք որդիք, ապա ժառանգ Աստուծոյ և ժառանգակից ընդ Քրիստոսի փառաց Հօր Աստուծոյ» (Հռոմ. Ը 16): Այսու աղանդատութեան ինչպէս նոցա կարեն իմանալ եկեղեցիք ուղղափառաց և զայլ աղանդատութիւնս լուրերականաց:

Դարձեալ վիճեն լուրերականմ ընդ ուղղափառաց, թէ ի քարոզել Քրիստոսի ի տան ուրում, եկին և ասացին Քրիստոսի, թէ. «Ահա՛ մայր քո և եղբարք քո կան արտաքոյ և խնդրեն գեղ» (Մար. Գ 32): Եւ յայսմանէ վերաբերեն, թէ ուրեմն Մարիամ յետ ծնանելոյն զՔրիստոս, ծնաւ բազում որդիս ի Յօսեփայ՝ ըստ ամուսնական ծննդեան: Պատասխանեմ ձեզ լուրերականացոյ, թէ բառքս (որդիք, մայր եղբայր, կին կամ հայր) ի բազմապատիկ միտս առեալ լինին յԱստուածաշունչ սուրբ գիրս: Քրիստոս ասի որդի Դաւթի, որ ո՛չ է որդի Դաւթի, զի որդիք Դաւթի էին Ամօն, Աբիսողոմ, Սաղոմօն և այլն, ապա յայտ է, թէ՛ Քրիստոս միայն ըստ մարմնական ազգականութեանն ասի որդի Դաւթի: Նոյնպէս և արտաքոյ կոչօղ եղբարքն միայն ըստ ազգականութեանն Քրիստոսի կոչէին եղբարք նորա: Առաքեալն կամելով ուսուցանել զհոռովմայեցիս զուսումն ֆրիստոնէական սուրբ հաւատոյ, ասէ. «Ոչ կամիմ, եղբարք, եթէ ազէտք լինիցիք վասն խորհրդոյս այսորիկ» (Հռոմ. ԺԱ. 25): Մի՞թէ հոռովմայեցիք եղբարք էին առաքելոյն՝ ծնեալք ի միոյ հօրէ և ի մօրէ մարմնապէս, քան ի յիցի, այլ ըստ սրբոյ տաղանի մկրտութեան խորհր-

<sup>6</sup> Փոխառված է բուրբ. օցլլուկ բառից, որը նշանակում է խորթ, որդեգիր երեխա:

դոյն կոչէ զնոսա եղբարս: Նոյնպէս գրի յեփես. (\*=Գաղատ) Դ. 26, թէ. «Վերինն երուսաղէմ ազատ է, որ է մայր մեր ամենեցուն», որ ցուցանէ զեկեղեցի սուրբ ամենայն հաւատացելոց: Աբրահամ ասի հայր, յայտ է, թէ՛ միայն ըստ հաւատոյ ասի հայր, որպէս խոստացաւ Աստուած և ասէ. «Հայր ազգաց բազմաց արարից զեզ» (Ծննդ. Ժէ 5): Ոչ միայն վերոյգրեալ բառքն ի փոփոխ միտս առեալ լինին, այլև համարեա՛, թէ բառք Աստուածաշունչ սուրբ գրոց ըստ մեծի մասին փոփոխին, կամ լաւ ևս է ասել փոխադրին կամ անցանէն յալլ միտս՝ որպէս վերագոյն ասացեալքն կամ որպիսի են յետագայ բանքն:

Ապա ուրեմն, որ ոք զբառն կամ զբանն Աստուածաշունչ սուրբ գրոց անփոփոխ կալցի ըստ ձայնին միայն, նա մի՛ համարձակեսցի ասել՝ Գիտեմ զմեկնութիւն Աստուածաշնչին. ասացի կամ որպէս յետագայ բանքն: Գրէ առաքեալն առ գաղատացիս, թէ. «Մինչ տղայքն էաք, ընդ տարերք աշխարհիս ի ծառայութեան կայաք» (\*Գաղ. Դ 3): Բանս այս (ընդ տարերք աշխարհիս ի ծառայութեան կայաք) փոխադրի ի նմանական իմաստ, զի տարերք աշխարհի են զոմքն, ողջակէզքն և պէսպէս նուէրք քահանայից հին օրինացն: Որպէս թէ ասէ առաքեալն. «Մեք մինչ հրէայքն էաք, սոցին միայն ծառայէաք, որով ոչ լինէր մեզ կատարեալ փրկութիւն և ազատութիւն հոգոյ» (Գաղ. Դ 3): Եւ եղև երբեմն պակասիլ զինոյ հարսանեաց, որ ի Կանա գալիլիացոց՝ որպէս «Եւ ի պակասիլ զինոյն, ասէ մայրն ցՅիսուս. Գինի ոչ ունին» (Յովհ. Բ 3): Իբր թէ կամէր Աստուածածինն, զի որդի իւր Յիսուս անդ հրաշս արագէ, և ինքն փառատուր լիցի այնուիկ, և բազմութիւնքն զՔրիստոս Աստուած հաւատացեն, որպէս ասի ի 11 համարն. «Եւ հաւատացին ի նա աշակերտքն նորա»: Եւ ասէ ցմայր իւր Յիսուս. «Զի՞ կայ իմ և քո, կի՞ն դու, չի՞ է հասեալ ժամանակ իմ» (\*Յովհ. Բ 4): Նոյնպէս բառս (կին) աստէն առեալ՝ ի նմանական միտս առեալ լինի, զի յասելն Քրիստոսի՝ Զի՞ կայ իմ և քո, իբր թէ սփանչելագործութիւնն իմ է, ասէ, քս գիտեմ զժամանակ սփանչելեացն, զի պարտի զինոյ պակասիլն յայտնի լինիլ ամենեցուն և մանաւանդ սպասատուրացն, յորոց ձեռս փոխարկելոց եմ զշուրն ի գինի, ըստ ամենայն սրբազան մեկնչաց Աւետարանացն վկայելոյ: Յասելն Քրիստոսի՝ Կին դու, ցուցանէ, թէ որովհետև ո՛չ իմացար, թէ ես ինքն հանդերձեալ էի ի մէջ բազմութեան արանց և կանանց առնել սփանչելիս, դու բնութեամբ եղեր անհամբեր և կարճամիտ նման կանանց հասարակաց: Դարձեալ, ի վկայելն Մատթէոսի ավետարանչին, Յովսէփ որդի Դաւթի, ասաց հրեշտակն, մի՛ երկնչիր առնուլ առ քեզ

<sup>7</sup> «Վահան ուղղափառաց» երկի գրաբնիչ Հովհաննէս վրդ. Շահխաթունյանցը «Յասելն Քրիստոսի... կանանց հասարակաց» նախադասությունը և մասնավորաբար Աստվածամորը տրված «անհամբեր և կարճամիտ նման կանանց հասարակաց» բնորոշումը համարել է դավանաբանական տեսանկյունից խնդրահարույց, աե՛ս Ա. Մելքոնյան, «Հովսէփ վարդապետ Արցախեցու «Վահան ուղղափառաց» երկը և դրա հրատարակության արգելքը», էջ 198:

զՄարիամ կին քո, քանզի որ ի նմայն ծնեալ է ի Հոգւոյն Սրբոյ է (Մատթ. Ա. 20): Եւ ի 18 համարն ասի. «Խօսեալ զմայր Յիսուսի Մարիամ Յովսեփու, մինչև եկեալ առ միմեանս գտաւ յղացեալ ի Հոգւոյն Սրբոյ»:

Եւ յայսմանէ յայտ է, թէ երկոտասան ցեղքն Իսրայէլի պահէին զերկոտասան կուսանս և իւրաքանչիւր կուսանացն երկոտասան արս նշանածս նոցա: Բայց կուսանքն պահեալ լինէին յիւրաքանչիւր բնակութիւնս իւրեանց զգոյնութեամբ: Իսկ յորժամ համարէին, թէ ժամանակ գալոյ և ծնանելոյ Քրիստոսի ի մի կուսանացն էանց, յայնժամ ասպ իւրաքանչիւր այր առնոյր զնշանեալ կոյս իւր ի կնութիւն իւր, յայնժամ և Յովսեփ մի էր ի նոցանէ: Չի Յովսեփ ի հեռաստանէ լուեալ էր զյղութիւն Կուսին, և ինքն չէր գնացեալ առ նա, այլ սուրբ Կոյսն յղացեալ էր ի Հոգւոյն Սրբոյ՝ ըստ վերոյ յիշեալ բանին Մատթէոսի: Եւ Յովսեփ կարծէր զյղացումն Կուսին ի մարդկանէ լինիլ: Եւ ոչ կամեցաւ իսայտառակ առնել ի հրապարակի, քանզի արդար էր, այլ կամեցաւ ի ծածուկ արձակել զնա: Եւ մինչդեռ Յովսեփ զայս գտաւ ածէր, ահա՛ հրեշտակ Տեառն ի տեսլեան երևեցաւ Յովսեփու և ասէ. «Մի՛ երկնչիւր առնուլ առ քեզ զՄարիամ կին քո, քանզի որ ի նմայն ծնեալ է ի Հոգւոյն Սրբոյ է» (Մատթ. Ա. 20): Իսկ կին ասիլն Մարիամու՝ է միայն վասն նշանելոյ և խօսելոյն Յովսեփայ:

Եւ գիտելի է, զի աղօթքն և աղաչանքն առ Աստուած կրկին է, որ ոմանք աղաչեն զԱստուած վասն այլոց, և ոմանք վասն ինքեանց միայն: Աղօթքն և աղաչանքն առ Աստուած վասն այլոց կոչի յատկապէս բարեխօսութիւն, որպիսի էին հին և նոր վկայութիւնք բարեխօսութեան սրբոց՝ ի վերն ասացեալք: Իսկ որ աղօթեն և աղաչեն վասն ինքեանց միայն անընդմիջաբար, օրինակ նոցա աղօթիցն են այսոքիկ. Խոնարհեցո՛՛ Տէր, զունկն քո, և այլն: Ողորմեա՛ ինձ, Աստուած, ըստ մեծի ողորմութեան քոյ, և այլն: Հաւատացեալք ունին զերկոսին տեսակս ևս, իսկ յութեականք և մահմետականք զանընդմիջաբար աղօթելն առ Աստուած միայն:

### Յաղագս պատկերասիրութեան և պատկերատեցութեան

Պատկեր կայ, որ առանց Աստուծոյ հրամանին է, զոր Աստուած կամի ոչ լինիլ, որպէս այն. «Մի՛ արացես քեզ կուտս ըստ ամենայն նմանութեան, որ ինչ յերկինս ի վեր է, և որ ինչ յերկրի ի խոնարհ, որ ինչ ի ջուրս ի ներոյ երկրի: Մի՛ երկիր պագանիցես և մի՛ պաշտեսցես գնոսս, զի ես եմ Տէր քո և արարիչ» Ել. Ի 4(\*-5): Իբր թէ ասէր Աստուած իսր[այ]էլացոց ազգին կամ ամենայն կոապաշտ ազգացն. Ես եմ արարիչ ձեր. արեգակն, որ յերկինս է, ո՛չ է արարիչ ձեր, ջուրն և հացն, որք կենդանի պահեն զձեզ, ոչ են Աստուած ձեր, այլ՝ արարողն արեգական, ջրոյ և հացի՝ է Աստուած և արարիչ: Իբր թէ երկրպագութիւնն երկու է բաժանեալ, մինն կոապաշտական և միւսն յԱստուծոյ հրամայեալ օրէնք:

Նախ ասացու՞մ գկոպաշտական վատթարութեան օրէնքն, և ապա գԱստուծոյ հրամայեալ պատկերսն, որով և հաստատուն լիցի յԱստուծոյ հրամայեալ պատկերացն երկրպագութիւն և ընդունելի, և երկրպագութիւն պատկերաց կոոց կոպաշտիցն՝ պախարակելի և ասելի: Գրեալ է ի յամել Մովսիսի ի լերինն Սինայի, դարձաւ ժողովուրդն իւրայելեան ի կոպաշտութիւն. «Զի տեսեալ ժողովրդեանն Իւրայելի, եթէ յամեաց Մովսէս իջանել ի լեռնէ անտի, կուտեցաւ ժողովուրդն ի վերայ Ահարօնի և ասեն. Արա՛ մեզ աստուածս, որ առաջնորդեսցեն մեզ, զի Մովսէս այրն այն, որ եհան զմեզ յեգիպտացոց, ո՛չ գիտեմք, զի՞ եղև նմա» (Ել. ԼԲ գլ.): Եւ Ահարօն վախելով ի նոցանէ՛ արար որք մի նոցա, և ասեն ամենայն ժողովուրդն՝ Ահա Աստուած քո, Իւրայել՛, որ եհան զմեզ յերկրէն եգիպտացոց: Եւ շինեաց Ահարօն սեղան առաջի որթուն և ասաց տօն Տեառն ի վաղի: Եւ ի վաղուեան ատուրն եհան զողջակէզս իբր փրկութեան, և նստան ժողովուրդն յուտել և յըմպել, և յարեան խաղալ ի վատթարագոյն խաղս: Այս է ահա պատկեր կոպաշտութեան, զի ոչ եթէ ահարօնեան շինեալ որթն էհան զիւրայելացիս յեգիպտոսէ, այլ ճմարիսն Աստուած՝ արարիչն երկնի և երկրի, բայց իւրայելացիք զորթն իբր ճմարիսն Աստուած պաշտէին: Գրի նաև Դ Թագ. Ա. (\*2-4). «Եւ անկաւ Ռֆոգիա արբայ որդի Աֆայարու ի վանդակապատէ վերնատան իւրոյ և հիւանդացաւ, և առաքեաց հրեշտակս և ասէ ցնոսա. Երթա՛յք, հարցէ՛ք զճաննիկ աստուածն Ակկարօնի՝ ապրիցի՛մ ես ի հիւանդութենէ իմմէ: Եւ հրեշտակ Տեառն կոչեաց զեղիա մարգարէն և ասէ. Արի՛ և ե՛րբ ընդատաչ սպասաւորացն Ռֆոգիայ արբայի սամարացոց և ասացես ցնոսա վասն ոչ լինելոյն Աստուծոյ ճմարտի՛ երթայք հարցանել զճաննիկ աստուածն Ակկարօնի: Ո՛չ այդպէս, այլ այսպէս ասէ Տէր. Յանկողիսն քո, յոր ելեր, ո՛չ իջցես այտի, այլ ի դմին մահու մեռցիս»: Որպէս ասաց՝ նոյնպէս և եղև: Եւ յայսմ պատմութենէ յայտ է, թէ որպէս Ռֆոգիա արբայն երկիրպագանէր ճաննիկ կոոցն և զոհս մատուցանէր նմա, նոյնպէս և մեծ մասն սամարացոց զոհէր և երկիրպագանէր իբր զճմարիսն Աստուած համարելով: Դարձեալ գրեալ է. «Եւ արար Ռոբովամ արբայ Իւրայելի երկուս երինջս ոսկիս և ասէ ցժողովուրդն. Մի՛ ելանէք յԵրուսաղէմ, զի աստուածք ձեր տոհմ երկու երինջս են, որք հանին զձեզ յերկրէն եգիպտացոց» (Գ Թագ. ԺԲ 28): Եւ եղ զմին ի կոոցն ի վիճակին Դանայ՝ որդոյն Յակոբայ, և զմիսն՝ ի Բեթել: Եւ երթայր ժողովուրդն իւրայելացոց յերկրպագութենէ միոյն՝ երկրպագանել այնմ, որ ի վիճակին Դանայ և զոհել զոհս իբրև արարչի իւրեանց: Դարձեալ պատուէր ետ Աստուած Մովսիսի և ասէ. «Ո՛չ ևս զոհիցեն որդիքն Իւրայելի զոհս սնտեաց, որ իբր Աստուած համարի նոցա» (Ղևտ. Ժէ 7): Նա ևս ի նոյն գլ[ուխ] ասի. «Մարդ ոք յորդոցն Իւրայելի, որ նորոգ եկեալ են առ ձեզ, մի՛ արասցէ զոհ կամ ողջակէզ արտաբոյ դրան խորանին, և որ արասցէ, սատակեսցի՛ անձն այն ի ժողովրդենէ իւրմէ» (\*Ղևտ. Ժէ 8-9): Զի արտաբոյ խորանին մատուցեալ զոհքն՝ իբր կոոց մատու-

ցեալ համարէին յԱստուծոյ: Որպէս և այժմ հրէայք արտաբոյ տանարին մատուցանեն զոհս և զհին ֆահանայութեան պաշտօն կատարեն, ուրեմն՝ կոպաշտ ասին և նոքա: Էին և յանցելումն ժամանակի այլև այլազինք կոպաշտ՝ որպէս ազգն պարսից, որք հոյ երկրպագանէին և պաշտօն մատուցանէին, և ազգն Հայոց գարշելոյն Անահտայ զոհէին և երկրպագանէին:

Իսկ պատկերն այնոքիկ, զորս Աստուած հրամայեաց Մովսէսի առնել, ո՛չ են կոտֆ. «Առասցենս երկուս ֆրօթէս նախարակեայս (խառատաֆաղ), և ֆրօթէն տարածեալ զերեսս իւրեանց, ունիցին հանդէպ միմեանց» (Ել. ԻԵ 18): Ո՛չ ապաքէն յորժամ մտանէին ֆահանայքն ի խորանն ինկարկել, երկրպագանէին ֆրօթիցն, ո՛չ իբրև Աստուծոյ, այլ իբրև սպասաւորաց Աստուծոյ, ըստ այնմ. «Հոգի է Աստուած, և երկրպագուաց նորա պարտիմք հոգտով և նշմարտութեամք երկիրպագանել» (Յովն. Դ 24), վասն զի պարտիմք զհրամանն Աստուծոյ անքերի կատարել: Եւ ևս գրեալ է. «Կոփեա՛ դու ֆեզ երկուս տախտակս ֆարեղէնս» (Բ Օրի. Ժ 1): Մի՞թէ ոչ երկիրպագանէին ֆարեղէն տախտակին որդիքն Իսրայէլի: Ոչ թէ ֆարեղէն տախտակին երկիրպագանէին, այլ սուրբ օրինացն, որ յաստուածուստ գրեալ էր ի տախտակի անդ: Արդ, որովհետև հրամայեալ է Աստուած զայնպիսի պատկերս առնել, բայց ոչ իբրև ինքեան Աստուծոյ մատուցանի նոցա պաշտօն և երկրպագութիւն, հրամայեալ է ուրեմն առնել ևս պատկերս սրբոց և երկիրպագանել նոցա, ոչ իբրև Աստուծոյ, այլ՝ սրբոց և սիրելեաց Աստուծոյ: Զի որպէս երկրպագելի են հրեշտակք և ամենայն սուրբք, երկրպագելի են և պատկերք նոցա նկարեալ և եղեալ ի մէջ սուրբ եկեղեցոց ուղղափառաց, ոչ զի դրօշեալ կուսս համարելով զնոսին (որպէս բարբանջեն պատկերատեացք), այլ զի պատկերօք իրապէս և նշմարտապէս երկրպագեալ սուրբքն, իբր թէ տեղի են պատկերքն երկրպագութեան, որով երկրպագին սուրբք: Ո՛վ ոք է յուղղափառացս այնպէս անասնամիտ, որ ո՛չ գիտիցէ, թէ սուրբք ի պատկերս իւրեանց լինին երկրպագելի և ընդունելի, նաև պատուելի, և ոչ եթէ նիւթաւոր ֆաշուած պատկերացն է երկրպագելի և պատուելի:

Բայց պատկերատեացքդ, զամենայն պատկերս կուսս համարիք դոմ, եթէ զայնս, զորս ոչ կամեցաւ Աստուած թէ լինիցին՝ որք են կոտֆ, և եթէ զայնս, զորս կամեցաւ լինիլ՝ որք են պատկերք սրբոց: Հարկ էր ուրեմն և ձեզ զպատկերս՝ հրամայեալս Աստուծոյ ընդունիլ, և զհրամայեալս նորա անարգել: Ապա երևի թէ կամ պէսպէս ախտօք պաշարեալ են զմիտս և զկամս ձեր, և կամ կենդանութիւն սուրբ հաւատոյ բարձեալ է ի ձէնջ: Այլ մեզ ոչ գոյ այլ Աստուած՝ բաց ի միոյ Արարչէն, որում ամենայն երկրպագութիւն, ծառայութիւն և պաշտօն մատուցանեմք ըստ տկարութեան մերում. ո՛չ երբէք և ո՛չ ուրեք համարձակիմք զաստուածային պատիւն տալ արարածոց: Եւ սակայն տգիտաբար բամբասելք դոմ զուղղափառսն, որպէս թէ դոմ Աստուծոյ առաւել պատիւ տայք՝ զերկրպագութիւն սրբոց կոպաշտութիւն համարելով: Աս-

տուած ոչ խնդրէ ի ձէնչ զայդպիսի պատիւ, զի այդ անարգանք է Աստուծոյ, քան թէ պատիւ: Քանզի պատիւ և անարգանք սրբոցն առ Քրիստոս և առ Հայր վերաբերի՝ որպէս ասաց Քրիստոս առաքելոցն. «Որ ձեզ լսէ, ինձ լսէ, և որ զձեզ անարգէ, զիս անարգէ. և որ զիս անարգէ, զառաքիչն իմ անարգէ» (\*Ղուկ. Ժ 16): Որոյ պատճառն է, զի հաւատացեալք Որդովն հանգչին ի Հայր, և Հայր անդրադարձապէս Որդովն հանգչի յամենայն հաւատացեալք՝ որպէս ասաց Քրիստոս առաքելոցն. «Գիտասցիք դուք, զի ես ի Հօր իմում, և Դուք յիս, և ես ի ձեզ» (Յովհ. ԺԴ. 20): Եւ ի շարականին ասի՝ Աստուած սուրբ և ի սուրբս հանգուցեալ, և ի սրբոց վերօրհնեալ:

Դարձեալ, կան պատկերք, որք ո՛չ պատուելի են, և ո՛չ անարգելի, այլ են ի գարդ մեծամեծ շինուածոց, կամ ի զքօսանս մարդկան, որպիսի են սիւնք, կոթողք, այսինքն՝ (դիք տաշ) պատկեր մարդոյ, թոչնոյ, առիծու, ձիատրի: Եւ այլ պէսպէս իրաց պատկերք գտանին յապարանս մեծամեծ արանց, կամ ի տապանաբարս՝ որպէս պատկեր գաւազանի, կամ մարդոյ՝ ունելով ի ձեռին փեղամիկ և թաս, որով որպէս թէ գինի արբուցանէ այլոց: Եւ այլ կերպակերպ պատկերք կան, զորս աստէն մի-մի թուել՝ անհնարին իմն է: Արդ, եթէ պատկերատեացք զայսպիսի պատկերաց յօրինօղսն կոապաշտ ասացեն, սոյնպիսի պատկերք, զորս ասացաք, յապարանս և ի պէսպէս շինուածս իրեանց ևս գտանին, ուրեմն՝ ինքեանք իսկ են կոապաշտք: Այսքան առ այս:

ARMINE MELKONYAN

#### HOVSEP՝ VARDAPET ARTS՝AKHETS՝I, *SHIELD FOR THE ORTHODOX*

**Keywords:** Hovsep՝ Arts՝akhets՝i, Armenian Apostolic Church, Lutherans, Orthodox, fasting, intercession of saints, worship of images, censorship.

Hovsep՝ vardapet Arts՝akhets՝i, an 18th-19th century theologian, philologist and monk from the Gandzasar Monastery, wrote his apologetic treatise *Shield for the Orthodox* at the behest of Metropolitan Baghdasar Hasan-Jalaleants՝, the Primate of the Karabakh Diocese, in 1838, in the city of Shusi. The *Shield* was addressed to members of the Armenian Apostolic Church who sympathised with or followed Lutheranism, as well as to the representatives of the Lutheran Church who had been established in Shushi since the 1820s. The *Shield* consists of three chapters: 1. On Fasting, 2. On the Intercession of Saints, 3. On Love (respect) and Hate of icons. In 1838, Metropolitan Baghdasar Hasan-Jalaleants sent the *Shield* to the Synod of the Mother See of Holy Etchmiadzin, requesting permission to publish it. Despite the positive response of the censor, Hovhannes Vardapet Shakhhat՝unyants՝, the

publication of the *Shield* was denied and it was handed over to the Mother See library as a prohibited book.

The text of the *Shield* is published for the first time, based on the autograph (Ms M2622, fol. 21r-42v).

АРМИНЕ МЕЛКОНЯН

### «ЩИТ ПРАВОСЛАВНЫХ» ВАРДАПЕТА ОВСЕПА АРЦАХЕЦИ

**Ключевые слова:** Овсеп Арцахеци, Армянская Апостольская Церковь, лютеране, православные, пост, почитание святых, поклонение иконам, цензура.

Вардапет Овсеп Арцахеци, философ, богослов, филолог и монах Гандзасарского монастыря XVIII-XIX вв., написал свой апологетический трактат «Щит православных» по указанию предстоятеля Карабахской епархии митрополита Багдасара Гасана-Джалалянца, в 1838 году в городе Шуши. «Щит» был адресован членам Армянской Апостольской Церкви, которые симпатизировали или были склонны к лютеранству, а также представителям протестантской церкви, основанные в городе Шуши с 1820-х годов. «Щит православных» состоит из трех глав: 1. «О посте», 2. «О почитании святых», 3. «О любви (уважении) и ненависти к изображениям». В 1838 году митрополит Багдасар Гасан-Джалалянц отправил «Щит» в Синод Первопрестольного Святого Эчмиадзина с целью получить разрешение на его публикацию. Несмотря на положительный ответ цензора, вардапета Ованеса Шаххатунянца, Синод не разрешил печатать «Щит православных» и передал его в первопрестольную библиотеку как запрещенную книгу.

Текст «Щита» публикуется впервые на основании автографа (Матенадаран рук. 2622, л. 21а-42б).